ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ---------- 2021 թվականի № ---Լ
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի №378Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 23-ի N02/11./32847-2021 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատանքային կարգապահական ներքին կանոնները հաստատելու մասին» №378Լ որոշմամբ հաստատված հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ գլխով.

«6.1. ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

31.1. Հանձնաժողովում սանիտարահամաճարակային անվտանգությունը ապահովելու նպատակով աշխատողները աշխատանքի ներկայանալիս սահմանված կարգով և ժամկետում Բաժին են ներկայացնում բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության մասին օրենսդրությամբ նախատեսված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերը:

31.2. Բաժինն ապահովում է՝

1) սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին օրենսդրությամբ նախատեսված՝ աշխատողների աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերի ստուգումը,

2) սանիտարահամաճարակային անվտանգության կանոններով սահմանված համապատասխան գրանցամատյանների վարումը, դիտարկումների իրականացումը:

31.3. Բաժինը սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների համապատասխան խախտում հայտնաբերելու դեպքում առերևույթ խախտում թույլ տված աշխատողի վերաբերյալ տվյալները մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է տվյալ աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին:

31.4. Սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների առերևույթ խախտում թույլ տված աշխատողը, կարգապահական վարույթի մասին տեղեկանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է գրավոր բացատրություն քննարկվող խախտման մասին:

31.5. Մինչև կանոնների 31.1.-րդ կետով սահմանված պարտականության առերևույթ խախտումը վերացնելը յուրաքանչյուր աշխատանքային օր աշխատանքի ներկայանալը դիտվում է որպես առանձին կարգապահական խախտում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
28 սեպտեմբերի 2021թ.